

այլ համառոտեալ ասացից, զի առեալ Ներսիսի ընդ իւր՝ զպատճէնս նախ եղեալ վիճաբանութեանց եւ թղթոց՝ վասն միաբանութեան երկոցուն ազգացն, նա եւ զկանխագոյն եւս գրելոց թղթոց պատրիարքացն Յունաց, զԵրեմիայի, զԳերմանոսի եւ զՓոտայ, եւ զայլոց ոմանց⁶⁰, յուղի անկաւ ընդ ընկերացն. եւ հասեալ ՚ի թագաւորեալ քաղաքն մատուցին կայսեր եւ պատրիարքին՝ զթուղթս Լեւոնի եւ զԳրիգորի Ապիրատայ կաթողիկոսի. յորս գրեալ էին սոքա՝ ըստ արժանոյն ընծայութիւն մեծ գովութեան զիմաստութեան եւ զսրբութեան նորին Լամբրունեցոյ, իբրու միակ յետ Աստուծոյ՝ բաւականի ՚ի պայքարել եւ ՚ի քննել, ՚ի հաւանել եւ ՚ի հաւանեցուցանել յայնպիսի նուրբ խնդիրս: Բազմօրեայ եղեն քննութիւնքն՝ ըստ մասանց վարդապետութեան հաւատոց եւ ծիսից ինչ, յորս տարաձայնին երկոքին ազգքս, եւ Ներսէս ըստ ողջամիտ իմաստութեանն առնէր պատասխանի, որոշելով զբան հաւատոյ եւ զայլայլութիւն ծիսի. ընդունէր զկարեւորսն, չառնոյր յանձն զոչ անհրաժեշտսն, զի զիտէր թէ ոչ եղիցի ընդունելի ազգին: Եւ յետ կրկին զնոյն իրաց վիճելոյ յեկեղեցւոջ՝ զկնի տօնի Պենտակոստէին, եւ բազում դրուատիս լսելոյ ՚ի Յունաց, իբրեւ ետես սա զՅոյնս յամառեալս ՚ի խնդրել զփոփոխութիւն ինչ ծիսից, եւ եւս առաւել ընդ իշխանութեամբ պատրիարքին իրեանց արկանել զկաթողիկոսն Հայոց, որպէս թէ գոնեա զձեռնադրութիւնն առնուլ ՚ի նմանէ, խոստացաւ յանձն առնուլ եւ զայն՝ եթէ եւ նոքա հաւանեցոյն հրաժարել ՚ի պատրիարքութենէ Անտիոքայ՝ եւ Հայոց թողուլ զայն անուն եւ աթոռ. ընդ սմին եւ այլ ինչ պայմանս եղ ոչ տարադէպս, բայց եթէ գոռոզութեան եւ հնացեալ սովորութեան նոցին. զոր ոչ առեալ յանձն Յունաց՝ ինքնին ՚ի դերեւ հանէին զառաջարկութիւն իրեանց եւ զՀայոց չափաւոր զիջողութիւն. ընդ որ՝ ոչ զիտեմ առաւել զցա՛ւ իւր յայտնիցէ մերս Ներսէս՝ եթէ զգայթակղիլն ընդ նոսա. «Արարեալ, ասէ, խօսակցութիւն՝ (նախայիշեալ կրօնական գրուածովքն), գտաք զոսա անծանօթ ՚ի սոցանէ, թանձրաբարբառք, եւ հրէական կամօք ընդ նիւթս կապեալք, որք ոչ ախորժեն ծառայել Աստուծոյ՝ նորոգութեամբ Հոգւոյն, այլ հնութեամբ գրոյն: Եւ ստրջացեալ

⁶⁰ ԶԱթանասի եւ զՄանեայ, ըստ ձեռագրին, յորոց առաջինն թուի ինձ պատրիարքն Աղեքսանդրիոյ յելս Ե դարու. երկրորդն՝ Մեննաս պատրիարք Կ. Պօլսի յամս 536-52. որոց թուղթք անծանօթ են մեզ, որպէս եւ Երեմիային՝ որ յամս 984-1012: